



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



2771

~~301~~ 127 MAR 2013 25 SEP 2006  
~~9 - 96~~ ՀԱՅՐԱՄԱՑՁՎԻ, Կ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
1 DECE 2009

Ա. ԳՈՒՄՊՈՎԻԶ

ՀԱՅԱՍՏԱԿԱԿԱՆ

ԹԵՕՐԵԱՆԵՐ

1010  
40367

Քարգմ. Խ. Սամելկան.

765



Թ Բ Ֆ Լ Ի Ս

Կ. Մարտիրոսյանի տպարան || Տիտ. Կ. Martirosianca

Օբուլովանսկան պլ., հ. № 12,

1902

11787

## ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԹԵՂՐԵԱՆԵՐ

I

Հասարակագիտութեան ալտերնատիւը

Գործողութիւններ թէ երևոյթներ։ Ահա այս  
ալտերնատիւը, որի լուծումը հասարակագիտութեան  
հիմնական խնդիրն է կազմում։

Պատմագիտները գիտութեան վրա նայում են  
որպէս առանձին անհատների գործողութիւնների վը-  
րայ։ Իս մոլորութիւն է։ Բոլոր գէպքերը, պատմա-  
կան էվոլյուցիա կազմող ամբողջ շղթան—երևոյթներ  
են, որոնք միանդամայն համանման են այլ բնական  
երևոյթներին։

Հասարակագիտութեան (սօցլոգիալի) այդ հիմ-  
նական դրութիւնն է հէնց, որ մենք հարկաւոր ենք  
համարում ապացուցանել։ Նախ՝ բացատրենք, թէ  
ինչ կընշանակէ բնական երևոյթ։

Բնական է կոչում այն երևոյթը, որն անխու-  
սափելի կատարում է բնութեան օրէնքների համա-  
ձայն։ Արևի ծագելն ու մայր մտնելը — բնական երե-  
ւոյթներ են, որովհետև նրանց ոչ ոք չի արտադրում  
և նրանք տեղի են ունենում, համձայն բնութեան  
օրէնքի։ Սակայն մինչև այժմ բնական են համար-  
ում միայն անօրգան, կենդանաբանական ու հոգե-  
կան երևոյթները, որոնք բնական գիտութեան ա-  
ռարկան են կազմում, գիտութիւնների, որոնց նպա-  
տակն է այդ երևոյթների ծագման և զարգացման  
օրէնքները պարզել։

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го сентября 1901 г.

Գէօլօգիալի, աստղաբաշխութեան, քիմիալի. Փիզիկալի արառկանները—անօրդան երևոյթներ են. բուսաբանութիւնը զբաղւած է օրգանական, կենդանաբանութիւնը—կենդանական, հոգեբանութիւնը—հոգեկան երևոյթներով: Այս դէպքում գիտութիւնների բնորոշ գիծն ու յատկութիւնը, արևստների համեմատութեամբ, այն է, որ առաջինները ձգտել են ըմբռնել բնական երևոյթները, որպէս զի ոչ միայն նրանց մէջ գտնւող երևոյթները հասկանալ ու նրանց պատճառական կապը գտնել, այլ և նրանց նոր ձևերը, նրանց ապագայ զարգացումը գուշակել: Տակաւին մի զիտութիւն մինչև այժմ չի կարողացել այդ շարքին պատկանել— դա պատմութիւնն է: Մինչև անգամ կարելի է ասել, որ դեռ ներկայումս էլ պատմութիւնը գիտութիւն չի դարձել, որովհետև պատմագէտները միշտ խօսում են մարդկային գործողութունների մասին և չեն կարողանում պատկերացնել մեր առաջ հասարակական երևոյթների էվոլյուցիան, որոնք կատարւում են համաձայն որոշ բընական օրէնքների: Պատմագէտները շատ լաւ զգում էին իրենց կարծեցեալ գիտութեան այդ թուլ կողմերը, բայց հնարաւորութիւն չունէին այդ գիտարութիւնը վերացնել...

Սակայն պատմագէտների թէօլօգիական շկոլան գիտականութեան այդ պակասը չէր զգում. նա խոյս էր տալիս այն տարակուսանքներից, որոնցով տանջւում են ազատ մտածող պատմագէտները: Բօսսիէտը որինակ, այնպէս էր գրում պատմութիւնը, ինչպէս

Աստւածշնչի հեղինակները յօրինում էին հրէաների պատմութիւնը կամ ինչպէս Գրիգոր Թուրացին գըրում էր իր “Gesta Dei per francesos”:< Նոցա կարծիքով (ամեն ինչ կատարում է անբնակականը), պատմութիւնը պիտի սահմանափակվի միայն նրանով, որ բացատրի իրաքանչիւր յաղթանակը իբրև բարոյականութեան մրցանակ և իրաքանչիւր անյաջողութիւն—յանցագործութեան պատիժ: Բայց էնցիկլօպէդիստների երևան գալով ազատամտութիւնը յաղթանակեց և զիտութիւնը ամեն ուրէք սկսեց երևոյթների պատճառները և բնական օրէնքները փնտրել, այդ խառնաշփոթութիւնը աւելի ևս զգալ տեց իր մասին: „Ի՞նչ անել—հարցնում է Վօլտերը, բարքերի, սովորութիւնների, օրէնքների, յեղափոխութիւնների այդ տարօրինակ պէսապէսութեան հետ, երբ ամեն ինչ, ըստ երևոյթին, հիմնւած է էզօխտական հաշվի սկզբունքի վրայ:“ Նա յուսահատւում է այդ ամենքին բացատրութիւն տալ: Յեղափոխութիւնների այդ բովանդակ զանդւածի մէջ, որ արտայատում է աշխարհի մի ծայրից մինչև միւսը, նա նկատում է միայն պատճառների ու հետեանքների մի շղթայ, “որոնք յափշտակում են մարդկանց, որպէս ալիքներ ու աւագներ բարձրացնող հողմերը:”

Վօլտերի համար „բովանդակ այս պատմութիւնը յանցանքների, խելառութիւնների և դժբաղդութիւնների լոկ մի կոյտ է, որոնց մէջ երբեմնակի պատահում են որ և է առաքինութիւններ, երբեմն բաղդաւոր վայրկեաններ, ինչպէս և անքերը անապատ-

Ներում երբեմն բացւում են այս ու այն կողմը ցըր տած բնակելի անկիւններ: “ Ենուհետեւ առաջ են զալիս մատերիալիստներ, ինչպէս Միլարօն (Բարոն Գոլբախի՛, „Բնութեան սիւտէմի“ Հեղինակի կեղծանունը), որ աշխատում է պատմութիւնը բացատրել ֆիզիկալի օրէնքների օգնութեամբ: „Բոլոր երեւոյթներում, որոնցով արտափայլել է մարդը իր ծընւած օրից մինչև մահը, մենք տեսնում ենք բնութեան բոլոր էակների համար եղած օրէնքների համեմատ միմիայն պատճառների ու հետեանքների մի շարք:

Մարդու գործողութիւնների բոլոր եղանակները, նրա զգացունքները, գաղափարները, կրքերը, ցանկութիւնները, վարմունքը, նրա յատկութիւնների անխուսափելի հետեանքներն են. նոյնպէս և այն արարածների յատկութիւնների յետեանքները, որոնց վերջնական օղակն ինքն է: Այն բոլորը, ինչ որ նա անում է, և այն ամենը, ինչ որ կատարում է նրա մէջ, դէպ իրեն ձգող իներցիալի ոյժի գործողութիւններն են, ձգտողական ու վանող ոյժի, ինքնապահպանութեան ձգտման, մի խօսքով, էներգիալի գործողութիւնները, որ յատուկ են բոլոր մեզ յայտնի արարածներին: Մարդու մէջ այդ ոյժը արտայառում է մի առանձին եղանակով: Բայց Փիզիքական օրէնքների ալգլիսի տեղափոխութիւնը հասարակական (սօցիալական) կեսնքի հողի վրայ, ոչ մի յաջողութիւն չընեցաւ: Հասարակական խոշոր, պատմական դէպքերը չեւ կարելի բացատրել ձգտողական

և վանողական ոյժերի օգնութեամբ: Մարդկալին հոգու զարգացումը, քազաքակրթութեան էւօլիցիան չի կարելի ներկայացնել ֆիզիքական գործողութիւնների հետինքի ձևով: Բայց և այնպէս Գոլբախի գաղափարները խոր արմատ ձգեցին և բազմաթիւ հետեղներ դտան: Այդ զաղափարը հաստատելու փորձերը շատ և շատ տարբեր են:

## II

### Պատմութեան փիլիսոփայութեան տկարութիւնը

Ոմանք, յետևելով այն գաղափարին, որ երբեմն յայտնել էր Մօնտեսկէն, հնարաւոր են համարում ապացուցանել՝ կլիմայի ներգործութիւնը հասարակական զարգացնան վրայ:

Այդպիսի յետևողներ ու աշակերտներ բաւականի շատ գոյնւեցան: Զարգացնելով իրենց ուսուցչի գաղափարները, նրանք ամեն տեղ աշխատում են կլիմայի ու ժողովուրդների բարոյական կազմի մէջ ամենասերտ կապակցութիւն գտնել: Բոկլը ձգտում էր ապացուցանել, թէ մարդը կապւած է կլիմայի հետ կերակրի համար գործածւող բոյսերի միջոցով, հետեւակես, ըստ երևոյթին պատմութեան վերաբերութեամբ գործադրում էր Մօնէշօթի դրութիւնը, թէ մարդը Փիզիքական ու բարոյական բնութեամբ իր կերած բոլոր նիւթերի յետեանքն է (Der Mensch ist was erist):

Բայց արդէն զերմանական փիլիսոփաները, հըսկայական փիլիսոփայական սիստեմներ ստեղծագործողները, բացասեցին վերոլիշեալ, այսպէս կոչւած,

նատուրալիստական գաղափարները։ Ակնյայտնի է, որ կլիման ոչ մի նշանակութիւն չունի։ Պատմութեան փիլիսոփաները չեն զբաղւում այդ տեսակ նատուրալիստիքական ցնորդներով։ Այնուամենայնիւ նրանք ևս ճգնում են ապացուցանել մնայուն ճշշմարտութեան գոյութիւնը մարդկային ցեղի զարդացման մէջ, ճշմարտութեան, որ ստիպում է ճանաչել բնութեան օրէնքների իշխանութիւնը։ Բայց այդ ճշմարտութիւնը նրանք չեն որոնում մարդկային ոգու աշխարհում։ Նրանց և ամենից առաջ չեգելի համար՝ մարդկութիւնն, ազգութիւնը մի ձև է, որով արտայատում է “արսօլիւտ իդեան”։ Այդ իդեան ինքն աբսոլիւտն է, իրերի իսկական էութիւնը (réalité)։ Նա զարգանում է, և փիլիսոփայութիւնը ցոյց տալով նրա էւօլիւցիօնի մէջ ճշտութիւն և կարգ, կարողանում է ճանաչել աբսօլիւտ ոգին, որ երևան է գալիս պատմութեան մէջ։

Բաւական է մտքի մի չնչին ճիգ, որպէս զի կարելի լինէր մատնացոյց անել պատմական-փիլիսոփայական այդ կօնցէպցիայի լիովին անկարելիութիւնը։ Նախ ծանօթ էր արդեօք պրուսական այդ փիլիսոփան ամբողջ մարդկութեան և էւօլիւցիօնի հետ, որի “ոգին”, կամ “իդեան”, նա ձգտում է մեզ ներկայացնել։ Նա միայն ծանօթ էր այդ մարդկութեան ու նրա պատմութեան մի չնչին մասի հետ։ Նա խօսում է միայն Փոքր-Ասիայի, Եգիպտոսի, Յունաստանի, Հռովմի և վերջապէս Եւրոպայի քրիստոնէական երկրների մասին։ Զինաստանը նրա կարծի-

քով «անշարժ պետութիւն» է, որովհետև նա չը գիտէ լիշեալ երկրների պատմութիւնը։ Նմանապէս Ամերիկան իր նոր լայտնւած լայնածաւալ պետութիւններով և նրա հոկայական զարգացումը մեր դարում այդ փիլիսոփայի համար գոյութիւն չունի։ Յիշաւի չեգելի աւելի սխոլաստիկ քան փիլիսոփայական ֆորմուլը, որով „աբսօլիւտը“, „իդեան“ բըղխում են սկզբնական «թէզիսից», կարծես դիտմամբ ստեղծւած է Փոքր-Ասիայի բռնակալ տերութիւնների, Եւրոպայի կլասիկ հնութեան և Գերմանիայի վերաբերմամբ։ Մանաւանդ վերջինիս, որ ըստ երևոյթին հասել է համայն մարդկութեան զարգացման գաղաթնակէտին և հանդիսանում է “աբսօլիւտ զաղափարի”, “Աստծոյ” իսկակալան բնատիպը „պատմութեան մէջ”։ Ուստի Պրուսիայում չեգելիականութիւնը դառձաւ մի պաշտօնական փիլիսոփայութիւն, որովհետև նրա շնորհիւ պրուսական արքան համարվում էր մարդկային սերունդի ամբողջ զարգացման վերաբոյն նպատակը։ Ի հարկէ այդ տեսակ սխտէմի տիրապետութիւնը խիստ էֆիմէրային է։ Նրա ոչընչութիւնը զգացին մինչև անդամ Գերմանիայում և ըէակացիան այն աստիճան խիստ բնաւորութիւն ըստացաւ, որ երկար ժամանակ անցնելուց յետով, որ և է մի երկասիրութիւն անւանել չեգելեան կամ պատմա-փիլիսոփայական՝ կընշանակեր ծաղրել նրան։

Այլպէս էլ ընկաւ պատմական փիլիսոփայութիւնը։

## III

## ԱՅԼ ՓՈՐՁԵՐ

Բայց վերջինիս շնորհիւ կենդանացած խնդիրը նմանապէս չ'անհետացաւ նրա հետ միասին։ Նա պահպանւեց բոլոր այն ուղեղներում, որոնք ենթակայ էին բնական գիտութիւնների ազգեցութեանը։ Ընկալելի էր ոչ խոյս տալ նրանից և ոչ էլ անուշադիր թորնել։ Վաղ կամ ուշ այդ խնդիրը կրկին պէտք է հանդէս գար գիտական ասպարէզի վրայ։ Նրա վերածնութիւնը ոչ սակաւ անզամ անյաջողութիւնների էր հանդիպու։ «Ճվէլցարացի միստիկ» Թօմերը ճգնում էր որ և է նմանութիւն գտնել մարդկային մարմնի և պետութեան մէջ։ Նրա հաշամազգակից, նշանաւոր գերմանական հրապարակախոս Բլիւնչլին իր «Etudes sur l'Eglise et l'Etat» գրւածքի մէջ զովաբանում էր այդ թէօրիաները, որոնք օրգանական անուն ստացան։ Բլիւնչլին մինչեւ անզամ ոտեղծեց շկօլա, և բազմաթիւ գերմանացի պրօֆեսորներ ՅՈ տարի շարունակ զզաղւած էին «օրգանական» բնոյթի և նրա «օրգանական» ֆունկցիաների հետազոտութեամբ։

Վերջապէս նոյն ազգութեան պատկանող դիտնական տնտեսագէտ Ճէֆֆլէն այդ թէօրիայի վրայ հիմնւելով, շտապեց քաղաքական կամ աւելի լաւ ասած հասարակական դիտութեան մի ամբողջ սիստէմ առաջ բերել։ Այդտեղ նա ուսումնասիրած է հասարակական մարմնի անդամակազմութիւնը (անա-

տօմիան), ֆիզիոլոգիան ու հոգեբանութիւնը. մատնացոյց է անում այդ տարօրինակ էակի կենսական ֆունկցիաները, որ բջիջների դերը կատարում են ամբողջ անհատներ։ Մեզ դժապեցնում է Ճէֆֆլէնի հանձարեղ երևակայութիւնը, նրա մտքի հնարագիտութիւնը, որոնք սակայն զործ են ածւել աւելի բանաստեղծական քան թէ գիտական գաղափարի վրայ։ Բայց, ընդհանրապէս ասած, նա մեզ ինչ ապացուցեց։

Թէ հասարակութիւնը օրգանական է՞ալ է և իբր այդպիսին ենթակայ է բնութեան օրէնքներին։

Ո՞չ. վերջին զրութիւնն ուղիղ է, բայց առաջինն անհիմն։

Եթէ մենք ցանկանում ենք ապացուցանել, թէ հասարակական կեանքը զեկաւարում է բնական օրէնքներով՝ այդ զեռ բաւական չէ, որպէս զի հասարակութիւնը նմանեցնենք օրգանական էակին, թէկուզ այդ տեսակ համեմատութիւնը հիմնւած լինէր ամենակական (specieuses) զծերի և ամենահոգեւոր լատկութիւնների (aperçees spiritiueles) վրայ, որովհետեւ խելամլա զատողութիւնը մեզ թելադրում է, որ հասարակութիւնը օրգանիզմ չէ։ Բնական այն օրէնքների զոյլութիւնը, որոնք զեկաւարում են հասարակութեան զարգացումը, պէտք է հաստատի միանդամայն այլ ճանապարհով։

## IV

Կոհիզ մշտական եւ ընդհանրական երեսյթ է

Մենք մատնացոյց ենք անում մի ընդհանուր փաստ, որ պատմութեան ընթացքում և մինչև անգամ ներկայումս մեր աչքերի առաջ բնաւորոշում է բոլոր ժողովուրդների կեանքը։ Այդ փաստը — կոհիւն է, որ տեղի ունի հասարակութիւնների ու այն մարդկանց խմբերի մէջ, որոնք միացած են ընդհանուր շահերով։ Ըրդեօք այս փաստը հաստատելու համար բաւական չէ աչքի անցկացնել բովանդակ պատմութիւնը և ամենագորեղ քաղաքականութիւնը։ Թէ՛ ուշքներս դարձնենք հին և ժամանակակից ժողովուրդների տարեգրութիւնների վրայ, թէ՛ նայենք մեր շուրջը, թէ՛ վերցնենք արդի լրագրութիւնը — միշտ և ամենուրեօք միևնոյն տեսարանն է բացում մեր առաջ, միևնոյն դրաման՝ — մարդկային խմբերի ընդհարումներ ու կոլիւ։

Այժմս տեսնենք թէ ինչպէս են առաջանում այդ խմբերը, ինչումն է կայանում նրանց մշտական կոհիւների էութիւնն ու արաւկան։ Ինչ էլ որ լինին այդ խմբերը, միշտ որ և է շահ նրանց կամ միացնում է կամ բաժանում։ և իր շահերի տարեգրութեան համեմատ էլ զանազանում է նրանց բնաւորութիւնը։ արիւնակցութիւնը, հարեւանութիւնը, լեզուն, կրօնը, գոյքերի տիրապետութիւնը, ընդհանուր ձեռնարկութիւնները, ռազմային և ծովային ճանապարհորդութիւնները, արտօնութիւնների պաշտպանութիւններ։ կամ սրանց դէմ կոլիւ և այլն։

Այսպիսի շահերիցն են հիւստում այն թելերը, որոնցով շաղկապւած են խմբերը։ վերջիններն ըստ իրենց բնութիւնում են ցեղեր, ժողովուրդներ, ազգութիւններ, դասակարգներ, քաղաքական կուսակցութիւններ և հանդիսանում են այն կումի գործող անձինք, որի պարզաբանելուց առաջ է դալիս պատմութիւնը։

Նրդ հարց է ծագում, ինչումն է այդ խմբերի բովանդակ կումի շարժառիթը, միշտ մի խմբի գերիշխանութիւնը միւսների վրայ։ իսկ այդ գերիշխանութեան ձևերը բազմատեսակ են։ Նախնական ժամանակներում խմբերի ընդհարումները առաջանում էին թշնամինների մսից օգտելու լոկ ցանկութիւնից, կամ գերելու և ստրկացնելու ձգտումներից, կամ օտար նոր խմբի կրկին տիրելու և այլտեղի հարըստութիւններին ու անասուններին գրաւելու դիտառութիւններից։ Բայց կազմակերպւած պետութեան մէջ կումի նպատակը դառնում է արդէն որ և է իրաւունքների ու արտօնութիւնների առանձնաշնորհումը։ պարլամենտական կուսակցութիւնները, իբրև հասարակական համապատասխան խմբերի ներկայացուցիչներ մրցում են իրենց համար որ և է տնտեսական շահեր ձեռք բերելու ցանկութեամբ և այլն... Բայց յամենայն դէպս իր էութեամբ նպատակը միշտ միևնոյնն է — այս կամ այն ձևով տիրապետել։ Եթե տիրապետութեան համար եղած կոհիւը ամբողջ մարդկային պատմութեան ամենաընդհանուր փաստն է, ուրեմն և այստեղից կարելի է եղրափակել, որ գոյու-

թիւն չունեն ազատ ընտրութիւնից բղխող անհատական գործողութիւններ, այլ, աւելի շուտ կան առանձին անձանց կամքից անկախ երևոյթներ, ուստի և մարդկային այդ խմբերը բնականաբար ձգտում են կրիւր անվերջ շարունակել ու միշտ վերանորոգել:

Դորա ամենալաւ ապացոյցը, թէ մենք գործ ունենք այս դէպքում երևոյթների և ոչ գործողութիւնների (acte) հետ, կարող է լինել այն, որ մենք կատարելապէս ընդունակ ենք որոշել ու նախատեսել նրանց ժամանումը: Մենք այդ կարող ենք իմանալ հէնց սկզբից և ոչ միայն նախատեսել, թէ այս կամ այն գործողութիւնը պէտք է օրոշ դասակարգերի կուր առաջացնի, այլ և գուշակել, թէ ինչ բնաւորութիւն կըստանայ լիշեալ կուրը: Պատզամաւորների ժողովում որ և է նոր օրէնք է յօրինում, օրնոր հարկ: Մենք ներկայ դէպքում կարող ենք համոզւած լինել, թէ սպարլամենտի որ կուսակցութիւնը դէմ կըլինի այդ նոր հարկին և որը կըպաշտպանի: Ի՞նչպէս ենք մենք այդ իմանում: Յիրաւի, մենք շատ լաւ գիտենք, որ իւրաքանչիւր կուսակցութիւն կըպաշտպանի իր շահերը և կըշահագործի հակառակ կուսակցութեանը: Մենք ասում ենք «կըշահագործի», որովհետեւ այդ շահագործութիւնը նոյնպէս տիրապէտութեան դադախարի արտակատութիւնն է, միմիայն այլ ձևով:

Այդ նպատակին են ձգտում մարդկային հասարակութիւնները միշտ և ամենուրէք, միւնոյն ոյժով թէ Աֆրիկայի ու Ամերիկայի կուսական ան-

տառներում, որտեղ մարդիկ միմեանց կլանում են, և թէ եւրոպական պարլամենտներում, որտեղ նրանց կուր մղում է ձախատութեան միջոցով: Ինչ տեսակ էլ լինէին այդ «գործողութիւնները», այնուամենայնիւ նրանք միշտ երևոյթներ են պատկերացնում, որ կախւած չէ անձնաւորութիւնների ազատ դատողութիւններից. ընդհակառակը, այդ երևոյթը մարդկային խմբերի ձգտումների հետևանք է, իմբերի, որոնք առանձին անձանց վրայ անխուսափելի ներզործութիւն են ունենում: Այն անձինք, որոնք զուրկ են ազատ դրութիւնից, միշտ ենթակայ են իրենց խմբի ճնշմանը, սրա մէջն է հասարակական կեանքի ամենամեծ գաղտնիքը, դա հասարակագիտութեան հիմնական թէզն է, որ անուշադիր է թողնել մինչև ներկայ ժամանակներս հասարակական ու քաղաքական գիտութիւնների կողմից:

Վերցնենք քաղաքական կեանքի որ և է կողմը և կըտեսնենք, որ անձնաւորութիւնն ամեն տեղ շրջապատւած է իր խմբի գաղափարներով ու մտքերով և մրցում է այլ խմբերի ձգտումների դէմ:

Եւ կամ թէ դուք կարծում էք, որ անհատը ինքն ընդունակ է սառնօրէն քննել իր կուսակցութեան ծրագիրը և ըստ այն էլ նրան շնուռել շետակութեան համոզմունքի ոյժի տակ: Ճատ կարելի է որ կան բացառական անհատներ, որոնք հաւատ են տածում իրենց կուսակցութեան ծրագրի առաւելութեանը. իսկ մեծամասնութիւնը կանգնած է ծրագրի կողմը ոոկ այն պատճառով, որ պատկանում է

կուսակցութեանը և այն էլ շնորհիւ կամ իր ծնընդեան, զբաղմունքի, գոյքերի սեփհականութեան ձւի, կարիքների կամ հազար ու մի բնական, հասարակական ու հոգեբանական շարժառիթների ազգեցութեան տակ:

Ո՞վ կսկսի բացատրել թէ այդ բոլորը տեղ ունի քաղաքական կեանքում: Բաւական է մի թեթև հայացք ձգել որ և է պարլամենտի, քաղաքական ժողովների, կուսակցութեանց, մամուլի, մինչև անգամ զրականութեան վրայ, որպէս զի համոզւել, թէ մենք գործ ունենք ոչ թէ առանձին անհատների այլ խմբերի հետ, որոնց խկապէս պատկանում են այդ անձնաւորութիւնները: Կմանապէս և քաղաքական կեանքի այլ կողմերում շատ պարզ արտացոլում է անձնաւորութիւնների այդ սինդինիտիկ բնաւորութիւնը: Իւրաքանչյուր անձնական վարմունք կարիք է բացատրել անհատի ու նրա խմբի փոխադարձ յարաբերութիւնների տեսակէտով և հենց իբրև վերջինիս առաջինիվրայ ունեցած ազգեցութեան ան լրատեշտ հետևանք, ուրեմն և իբր հասարակական և եռութ:



53

ՀՀ Ազգային գրադարան



NL0192254

11. 787

301  
9-96